ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

N 320 -11
05 մայիս 2011թ.

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐՄԵՆ ՂՈՒԼԱՐՅԱՆԻՆ

Կից ուղարկվում են Դիլիջան քաղաքային համայնքի ավագանու 28.04.2011 թվականի նիստի թիվ 76-86 որոշումները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կատ. ՀՀ Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ ՝ Սոնա Եգանյան (+374 268) 2-25-85

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀՀ
ՄՈՒՏՔ N ________
«____» ________ 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 76

28 ապրիլ 2011թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխության մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
3. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
4. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
5. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
6. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
7. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
8. Դիլիջան համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունները Դիլիջանի համայնքի

գույքացանկում ընդգրկելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
9. Դիլիջանի Օրջոնիկիձե փողոց II նրբ. թիվ 2/1 հասցեի 154.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
10. Դիլիջանի համայնքի ավագանու 2009 թվականի մարտի 12-ի թիվ 34 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 77-Ն

28 ապրիլ 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թվականի վարչական բյուջեի եկամուտները
1)ավելացնել «Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ» - 5800.0հազ.դրամ
2)պակասեցնել «Այլ գույքի վարձակալությունից մուտքեր» - 4000.0 հազ.դրամ
2. Դիլիջան քաղաքային համայնքի 2011 թվականի վարչական բյուջեի ծախսերն ավելացնել

1)«Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)» (բաժին 5 խումբ 6 դաս 1 հոդված 4261) - 950.0հազ.դրամ
2)«Այլ մշակութային կազմակերպություններ» /բաժին 08 , խումբ 02 , դաս 04, հոդված 4237/ - 850.0 հազ.դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 78

28 ապրիլ 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.ԲՅՈՒՋԵԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ
ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել 1941-1945թ. Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 66-րդ տարելիցի կապակցությամբ պատերազմի մասնակից թվով 21 վետերանների տալ դրամական օգնություն:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և դրամական օգնություն տալու նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 525000 դրամ «Այլ մշակութային կազմակերպություններ» /բաժին 08 , խումբ 02 , դաս 04, հոդված 4729/ :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՍԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՄԱՆԹՐՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 79

28 ապրիլ 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքն առավել գեղատեսիլ դարձնելու , զբոսաշրջության նոր սեզոնին նախապատրաստելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել քաղաքի տարբեր մասերում կատարել կանաչապատման աշխատանքներ, որի համար պետք է ձեռք բերել տարբեր տեսակի դեկորատիվ ծաղիկներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և քաղաքի կանաչապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ծաղիկների գնման նպատակով Դիլիջան համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասից «Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)» (բաժին 5, խումբ 6 , դաս 1, հոդված 4261) հատկացնել 950000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 80

28 ապրիլ 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՊԾ-ի «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի շրջանակներում Դիլիջանի համայնքների միության կողմից հաստատվել և ներկայացվել է ծրագիր , որի շրջանակներում պետք է կատարվի Դիլիջան քաղաքային համայնքի ենթակայության թիվ 2, թիվ 3, թիվ 5 մանկապարտեզների և երաժշտական դպրոցի մասնակի վերանորոգման աշխատանքները: Դիլիջան քաղաքային համայնքի ներդրումը նշված ծրագրին պետք է կազմի 1786160 դրամ ՝ նյութերի տեսքով:

Համայնքի մասնակցությունը ծրագրին ապահովելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում կատարել ծրագրով նշված շինարարական նյութերի գնում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրին համայնքի ներդրումն ապահովելու նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Նախադպրոցական կրթություն » /բաժին 9 , խումբ 1, դաս 1, հոդված 5113/ հատկացնել 1786160 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 81

28 ապրիլ 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.ԲՅՈՒՋԵԻ
ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ
ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Այգեստան , Ուսանողական, Մյասնիկյան և Կալինինի փողոցի բնակիչները խնդրանքով վերանորոգելու նշված փողոցների և հարակից նրբանցքների փողոցային լուսավորության ցանցը:
Ուսումնասիրությամբ պարզվել է , հետագա շահագործման համար խիստ անհրաժեշտ է վերանորոգել քաղաքի վերը նշված հատվածների փողոցային լուսավորության ցանցը:Աշխատանքները ժամանակին ու որակով կատարելու համար համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել օրենսդրության պահանջներով կատարել համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման աշխատանքների գնում ՝ ներգրավելով մասնագիտական կարողություն ունեցող անձանց:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Այգեստան փողոցի, Ուսանողական փողոցի , Մյասնիկյան փողոցի 1-ին նրբանցքի և Կալինինի փողոցի 2-րդ փակուղու փողոցային լուսավորության համակարգի վերանորոգման նախագծանախահաշվային փոստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման ֆինանսավորման համար Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 180000 դրամ /բաժին 6, խումբ 4, դաս 1, հոդված 5134/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 83

28 ապրիլ 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել մեծ շուքով և տոնախմբությամբ կազմակերպել և անցկացնել սույն թվականի մայիսի 5-ից 9-ը Դիլիջան քաղաքում անցկացվելիք Հայաստանի Հանրապետության դպրոցականների շախմատի 5-րդ օլիմպիադայի եզրափակիչ փուլը, ինչպես նաև 1941-1945թ. Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 66-րդ տարեդարձը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասից «Այլ մշակութային կազմակերպություններ» /բաժին 08 , խումբ 02 , դաս 04, հոդված 4237/ հատկացնել 300000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԼԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 84

28 ապրիլ 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻԼԻՋԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ

- Դիլիջանի քաղաքային համայնքի Գետափնյա փողոցի թիվ 70 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի 113-121 ծածկագրով հողում քաղ. Ռուզաննա Հարությունյանի կողմից կառուցվել է ինքնակամ շինություն. ավտոտնակ՝ 16.0 քմ մակերեսով:
- Դիլիջանի քաղաքային համայնքի Վասիլև փողոցի թիվ 42/1 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականություն հանդիսացող հողում քաղ. Թամարա Զոհրանյանի կողմից կառուցվել է ինքնակամ օժանդակ շինություն՝ 34.0 քմ մակերեսով:
- Դիլիջանի քաղաքային համայնքի Կամարինի փողոցի թիվ 50 հասցեի բնակելի տանը հարակից տարածքում, համայնքի սեփականություն հանդիսացող հողում քաղ. Ռուսլան Բալինյանի կողմից կառուցվել է ինքնակամ օժանդակ շինություններ՝ 7.9 քմ և 25.9 քմ մակերեսներով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Ինքնակամ կառուցված շինությունները ընդգրկել Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում համապատասխան հետևյալ արժեքով.

- Դիլիջանի քաղաքային համայնքի Գետափնյա փողոցի թիվ 70 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի 113-121 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն. ավտոտնակ՝ 16.0 քմ – 27200 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 82

28 ապրիլ 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.ԲՅՈՒՋԵԻ
ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ
ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային զբոսայգին նոր սեզոնին նախապատրաստելու հետ կապված համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել զբոսայգու տարածքում տեղադրել ցուցանակ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջանի քաղաքային զբոսայգու տարածքում ցուցանակի պատրաստման և տեղադրման աշխատանքների գնման համար Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ, բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 400000 դրամ «Այլ մշակութային կազմակերպություններ» /բաժին 08 , խումբ 02, դաս 04 հոդված 5132/ :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՄԱՆԹՐՈՍՅԱՆ*

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 85

28 ապրիլ 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵ ՓՈՂՈՑ II ՆՐԲ. ԹԻՎ 2/1
ՀԱՍՑԵԻ 154.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ
ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Արմեն Միքայելյանը, Օրջոնիկիձե փողոցի II նրբ. թիվ 2 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան 1040.0քմ տնամերձ հողամասին կից գտնվող / Օրջոնիկիձե փողոցի II նրբ. թիվ 2/1 հասցեի/ 154.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 154.0քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, վերը նշված բնակելի տան սեփականատեր Արմեն Միքայելյանին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի II նրբ. թիվ 2/1 հասցեի 154.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 191268 դրամ արժեքով օտարել քաղ. Արմեն Միքայելյանին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի II նրբ. թիվ 2/1 հասցեի 154.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 191268 դրամ արժեքով, քաղ. Արմեն Միքայելյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 86

28 ապրիլ 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009Թ. ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ 34 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2009թ. մարտի 12-ի թիվ 34 որոշման մեջ տեղի է ունեցել սխալ, մասնավորապես քաղ. Իշխան Ալիխանյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տան փոխարեն գրվել է տնակ /բարաք/ և ավտոտնակի փոխարեն գրվել է օժանդակ շինություն /ծածկ-ավտոկանգառ/, ինչից ելնելով սխալ է հաշվարկվել ավտոտնակի արժեքը: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Դիլիջանի համայնքի ավագանու 2009թ. մարտի 12-ի թիվ 34 որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝ քաղ. Իշխան Ալիխանյանի կողմից ինքնակամ կառուցված «տնակ /բարաք/»-ի փոխարեն կարդալ «բնակելի տուն» և «օժանդակ շինություն /ծածկ-ավտոկանգառ/»-ի փոխարեն կարդալ «ավտոտնակ»:
2. Նույն որոշման մեջ քաղ. Իշխան Ալիխանյանի կողմից կառուցված 37.7քմ մակերեսով ավտոտնակի արժեքն ընդունել 49010 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՄԱՆԹՐՈՍՅԱՆ*